

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Դեոնթոլոգիան բարոյական պատասխասատվության տեսություն է, մարդկային վարքի ուղեցույց: Ինչպես գրեթե յուրաքանչյուր մասնագիտություն, փաստաբանությունը ևս ունի իր սեփական դեոնթոլոգիան՝ վարքագծի կանոնագիրքը:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի մշակումը, թերևս, անհնարին կլիներ՝ առանց հիմնվելու իրավաբանների դերակատարման վերաբերյալ ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքների, Իրավաբանների միջազգային ընկերակցության «Իրավաբանական մասնագիտությունների անկախության ստանդարտների», Իրավաբանական մասնագիտության ընդհանուր սկզբունքների և Էթիկայի միջազգային կանոնագրքի, Փաստաբանների միջազգային միության 21-րդ դարում իրավաբանական մասնագիտության մասնագիտական վարքի թուրինյան սկզբունքների, Եվրոպայի խորհրդի R(2000)21 հանձնարարականի, Եվրոպայի իրավաբանների վարքագծի կանոնագրքի վրա:

Փաստաբանի վարքագծի ընդհանուր սկզբունքներն են՝ 1. անկախություն, 2. վստահություն և հարգանք իր մասնագիտության նկատմամբ, 3. գաղտնիություն, 4. այլ փաստաբանական միությունների և իրավական հասարակությունների կանոնների նկատմամբ հարգանք, 5. անհամատեղելի գործունեություն, 6. վստահորդի շահերը, 7. ձեռնհասություն, 8. գիտելիքների կատարելագործում, 9. Պալատի հետ փոխհարաբերություն, 10. փաստաբանի գործունեության հրապարակայնությունը, 11. փաստաբանական գործ, 12. փաստաբանի գործունեության իրավապաշտպան բնույթը, 13. փաստաբանի անձնական գործ:

Յուրաքանչյուր փաստաբան, իր գործունեության ցանկացած փուլում, պարտավոր է ղեկավարվել փաստաբանի վարքագծի կանոնագրքով ամրագրված պահանջներով, ընդ որում՝ ինչպես իր վստահորդի հետ հարաբերություններում, այնպես էլ՝ դատարանների և փաստաբանների հետ հարաբերություններում:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Դատարանների հետ հարաբերություններում փաստաբանը պետք է ենթարկվի այդ դատարանի /տրիբունալի/ կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվի դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին՝ միաժամանակ իր վստահորդի շահերը պաշտպանելով անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները:

Փաստաբանը, վստահորդի շահերը ներկայացնելիս պետք է օգտվի արդար դատաքննության հնարավոր միջոցներից և իր հերթին նպաստի դատավարության արդար իրականացմանը: Փաստաբանը երբեք չպետք է

գիտակցաբար կեղծ կամ ապակողմնորոշող տեղեկություն ներկայացնի դատարանին:

Փաստաբանը կարող է դատավորի հետ շփվել մասնագիտական քննարկումներ կատարելու նկատառումներից ելնելով, բացառությամբ, եթե տվյալ դատավորը քննում է փաստաբանի մասնակցությամբ գործ, և քննարկումը վերաբերվում է այդ գործին կամ կարող է այդպիսի տպավորություն թողնել: Փաստաբանի կողմից դատավորի հետ սոցիալական ցանցում «ընկեր» հանդիսանալու կամ նույն հետաքրքրությունների խմբում գտնվելու հանգամանքը ինքնին չի կարող հանդիսանալ նրանց կախյալ հարաբերությունների ապացույց (հիմք):

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Փաստաբանների միջև պետք է լինի վստահություն և համագործակցություն:

Փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական աշխատակիցներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ, մասնավորապես, չպետք է՝ 1) թույլ տա այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ, 2) վստահորդին դրդի այլ փաստաբանի հետ ունեցած իրավական օգնություն ցույց տալու մասին պայմանագրից հրաժարվել, 3) վստահորդի հետ բացասական իմաստով քննարկի այլ փաստաբանի՝ անձնական կյանքին, նյութական վիճակին, մասնագիտական հմտություններին, հանձնարարության վարձատրության պայմաններին վերաբերող և հանձնարարության կատարման հետ չառնչվող այլ հանգամանքներ:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դեռնթուղգիան գիտություն է բարոյականության մասին, ուստի՝ կարելի է փաստել, որ փաստաբանությունը և բարոյականությունն անհնար է դիտարկել միմյանցից զատ և փաստաբանությունն առաջին հերթին հիմնվում է բարոյական արժեքների վրա:

Կարեն Տոնոյան

*«Վ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհուրդ»*